

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Կանադա մշտական բնակության ժամանած (ՀՀ ներքին գործերի նախարարության Անձնագրային և վիզաների վարչության կողմից Հայաստանում հաշվառումից դուրս գրված) Հայաստանի քաղաքացիները պետք է հաշվառվեն Կանադայում ՀՀ դեսպանությունում:

Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ դեսպանության հյուպատոսական բաժին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում՝ մշտական բնակության հյուպատոսական հաշվառման կանգնելու խնդրանքով /կցվում է/,
2. Լրացված հաշվառման թերթիկը /կցվում է/,
3. Անձնագիրը,
4. Անձնագրային չափսի մեկ լուսանկար,
5. Կանադայում մշտական բնակչի կարգավիճակը հաստատող փաստաթղթի (Landed Immigrant Paper) պատճենը
6. Պետական տուրքի վճարման անդորրագիրը՝ **101 CAD*** չափով, դուրս գրված ՀՀ դեսպանության անունով (money order or certified check made payable to the Embassy of Armenia): Կանխիկ գումար, անձնական չեկ կամ կրեդիտ քարտ չի ընդունվում:

Ծանոթագրություն.

1. «Հյուպատոսական հաշվառում» դրոշմակնիքը պահանջվում է ՀՀ տարածքից ելքի համար:
2. Կանադա ժամանելուց հետո վեց ամսվա ընդացքում մշտական բնակության հյուպատոսական հաշվառման կանգնած չլինելու դեպքում, ՀՀ պետական տուրքի մասին օրենքով նախատեսվում է հավելվածար՝ **45 CAD*** չափով՝ յուրաքանչյուր և ոչ լրիվ տարվա համար:
3. Փաստաթղթերը փոստով ուղարկելու դեպքում պահանջվում է նաև պատվիրված փոստի նախապես վճարված հետադարձ ծրար (pre-paid return envelope), որն ունի որոնման համար (registered mail with a tracking number):
4. Դեսպանությունը պատասխանատվություն չի կրում փոստային ծառայության մեղքով կորած փաստաթղթերի համար:

* Ուշադրություն՝ Բոլոր սակագները ենթակա են փոփոխման առանց նախնական զգուշացման

**ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
(լրացնել պարզ և ընթերցելի)**

Լուսանկար

1. Անուն, հայրանուն, ազգանուն (փոփոխության դեպքում նշել նախկին անուն կամ ազգանուն/ներ/ը)	
2. Ծննդյան թիվը, ամսաթիվը և վայրը	
3. Ազգությունը	
4. Ընտանեկան կարգավիճակը	
5. Ամուսնու/կնոջ անունը, ազգանունը (առկայության դեպքում)	
6. Երեխաներ (առկայության դեպքում)	- - -
7. Կրթությունը (ուսումնական հաստատության անվանումը և ավարտելու թիվը)	
8. Ե՞րբ եք ժամանել Կանադա	
9. Հայաստանում վերջին հաշվառման հասցեն	
10. Կանադայում բնակության հասցեն (լատինատառ) և հեռախոսահամարը	
11. Աշխատանքի/ուսման վայրը և պաշտոնը, հասցեն և հեռախոսահամարը	

12. Հայաստանում բնակվող մերձավոր ազգականների (առկայության դեպքում) անունները և հասցեները	- - -
13. Անձնագրի համարը, տրման ամսաթիվը, անձնագիրը դուրս գրած ՆԳ բաժնի նշանիչ կողը	
14. . Լրացման ամսաթիվը	
15. Ստորագրություն	

Ծառայողական նշումներ

Փաստաթղթերն ընդունվել են՝ «.....» 200 թ.

Հյուպատոսի ստորագրությունը՝